

ԻՐԱՆԱՀԱՅ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՇՈՒՐՋ

(Հպանցիկ ակնարկ)

Ա. ԹԱԴԷԻ ՎԱՆՔ

Իրանի հնագույն հայ ճարտարապետական յուշարձաններից է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառի Մակու քաղաքից 23կմ հարաւ-արեւելք՝ Չալդուրանի դաշտում գտնուող Ս. Թադէոս առաքեալի կամ Ս. Թադէի վանքը¹: Այն գտնուում է Աւարայրի դաշտի հիւսիսարեւմտեան կողմում, իսկ հիւսիսային կողմում՝ հարիւր քայլ հեռւորութեամբ, Ղարաքիլիսա հայաբնակ գիւղին է²: Յատկանշական է, որ մահմեդական բնակչութեան շրջանում վանքը յայտնի է Ղարաքիլիսա (Սեւ եկեղեցի) անուամբ:

Վանքի հիմնադրման ճշգրիտ թուականի վերաբերեալ միասնական կարծիք դեռեւս գոյութիւն չունի: Աւանդութիւնն այն վերագրում է մեր թուարկութեան առաջին դարին: Ս. Թադէոս առաքեալը քրիստոնէութիւն քարոզելու համար նահատակուել է 48 թուականին Արտազ գաւառի Սանատրուկ դաշտում³: Համաձայն հայ պատմագիրների ու մատենագիրների տուած տեղեկութիւնների՝ Ս. Թադէի վանքը կառուցուած է Ս. Թադէոս առաքեալի գերեզմանի վրայ: Պատմաբանների կարծիքով այն հիմնուել է Դ.-Ձ. դարերում⁴: Հ. Մկրտիչ Պոտուրեանը գրում է,

1 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Արտազի երեք վանքերը*, Երեւան, ՀՃՈւ հրատ., 2012, 39:

2 Հայաստանի ազգային արխիւ (յետայսու՝ ՀԱԱ), ֆ. 425, ց. 1, գ. 1, ք. 57: Նոյն տեղում, ֆ. 465, ց. 7, գ. 5, ք. 3 շրջ.:

3 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., *Իրանահայ գաղութի պատմութիւնից (նորագոյն շրջան)*, ի Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ. VIII. Իրան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 270:

որ մինչեւ ժԳ. դարն անյայտ են մնացել հռչակաւոր վանքի պատմութեան անցեալի վկայութիւնները, եւ միայն ժԳ. դարից յետոյ կան մատենագրական տեղեկութիւններ, յիշատակարաններ, արձանագրութիւններ, կոնդակներ, որոնց միջոցով կարելի է ծանօթանալ վանքի վերջին դարերի դէպքերին⁵:

Արաբագիր պատմագիր Համդուլլահ Մոսթոֆին՝ Մակուլի չըջանը, ուր գտնուում է նաեւ Ս. Թաղէի վանքը, համարում է քրիստոնեայ վանականների նստավայր⁶:

Ըստ աւանդութեան՝ վանքի առաջին շինութիւնը Ս. Թաղէոս առաքեալի չարչարանքների եւ նահատակութեան վայրում կառուցուած մատուռն է, որ դարեր անց վերածուեց եկեղեցու⁷: 1319ին տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով այն աւերուեց եւ վերականգնուեց 1329ին: Այդ թուականի եւ Զաքարիա եպիսկոպոսի ձեռամբ վերանորոգուած լինելու մասին է վկայում հիւսիսային որմի վրայի տասնհինգտողանի արձանագրութիւնը⁸:

Վանքի յետագայ շինարարութիւնն իրականացուել է 1811-1822 թուականներին: Այն կապուած էր ռուս-պարսկական պատերազմների դիւանագիտական նախապատրաստման եւ Ատրպատականի թեմի այն ժամանակուայ առաջնորդ ու վանահայր Սիմէոն արքեպիսկոպոս Բզնունու յայտնի գործունէութեան հետ⁹:

Վանքի վերջին շինութիւնները կառուցուած են սպիտակ եւ յղկուած մարմարաքարով՝ որպէս շարունակութիւն մոխրագոյն քարով կառուցուած հատուածի: Սպիտակի եւ մոխրագոյնի զուգակցումը վանքին առանձնայատուկ գրաւչութիւն է հաղորդում: Շէնքը բարձրանում է քարէ հաստաբետ չորս սիւնների վրայ, որոնք միանում են միջակայ կամարներով: Այն ունի երեք մուտք, երկու բեմ եւ կամարակապ 11 լուսամուտ: Վանքի երկու՝ հին եւ

5 ՀԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 1, ք. 57:

6 Նոյն տեղում, ֆ. 465, ց. 7, գ. 5, ք. 7:

7 Գեորգեւս Կ., Ամէնուն տարեգիրքը 1958, Ե. տարի, Պէյրութ, «Մշակ», 1957, 443:

8 ՀԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 1, ք. 57:

9 Արքեպիսկոպոս Սիմէոն Բզնունին, ունենալով պարսկական կողմնորոշում, քաղաժառանգ Արաս Միրզայի բարոյական եւ ցիւրքական օժանդակութեամբ վաճի սահմաններում սկսեց նոր տաճար կառուցել: Այդ նախաձեռնութեան ֆաղափական նպատակը «Նոր Էջմիածնի» կառուցումն էր, հետեւաբար՝ նոր կաթողիկոսի նշանակումը, որի արդիւնքում հնարաւոր կը լինէր հայ եկեղեցին ռուսական եւ թուրքական ազդեցութիւնից դուրս բերել (տե՛ս ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., նշ. աշխ., 270):

նոր կառույցներն էլ պսակուած են կամարակապ 8 լուսամուտ ունեցող գմբէթով¹⁰:

Վանքի արտաքին պատերը բաժանուած են երեք մասերի: Յատակից շուրջ մէկ մետր բարձրութեամբ շարուած քարերը չունեն որեւէ զարդաքանդակ: Յետագայում այդ քարերի վրայ իրենց անուններն են փորագրել վանք այցելած բազմաթիւ ուխտաւորներ կամ անցորդներ, նրանց թւում եւ անուանի յեղափոխական գործիչներ ու հայդուկներ: Վանքի արտաքին պատերի երկրորդ եւ երրորդ շարքերը զարդարուած են քանդակներով ու փորագրութիւններով, որոնք դասւորուած են շինութիւնը: Երկրորդ շարքը զարդարուած է խաչքարերով, հայկական իշխանական տների նրբաքանդակ զինանշաններով, ծառերով եւ այլ պատկերներով: Երրորդ շարքում փորագրուած են առաքեալների, սրբերի եւ թագաւորների նկարներ¹¹: Ս. Թադէոս առաքեալի վանքի ներսը հարուստ է թեմատիկ որմնանկարներով:

Վանքի գլխաւոր մուտքի սիւների վրայ քանդակուած են առիւծներ: Մասնագէտների կարծիքով վանքի քանդակագործական աշխատանքներում զգացում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու քանդակագործութեան ազդեցութիւնը:

Վանքի զանգակատունը կառուցուած է չորս հսկայ սիւների վրայ, որոնք միացուած են կամարներով: Ս. Էջմիածինը յետագայում արգելեց աւարտին հասցնել Ս. Թադէի վանքի զանգակատան կառուցումը, քանզի այդ դէպքում նմանութիւնը Ս. Էջմիածնի վանքին շատ նկատելի կը դառնար¹²:

Ս. Թադէի վանքի նոր եկեղեցին կառուցել են քարտաշ եւ փորագրող հմուտ վարպետներ, քանդակագործներ ու մեյմարներ (ճարտարապետներ): Նրանց մէջ նշանաւորուած էր Գալուստ անունը¹³:

Նոր եկեղեցին բաց երանգի քարով առանձնանում է հին եկեղեցուց: Նոր եկեղեցու արտաքին կառուցուածքը յուշում է կառույցի ներքին ծաւալայտակազօային յօրինուածքը, մինչդեռ հին եկեղեցու՝ ներսից խաչաձեւ յօրինուածքն արտաքինից ամ-

10 Ա.ՃԵՄԵԱՆ, Հ., Ս. Թադէի վանքը, մաս առաջին, Թաւրիզ, «Ա.ճի», 1959, 18-19:

11 ԳԵՈՐԳԵԱՆ, Կ., նշ. աշխ., 445-446:

12 Ա.ճի, 448:

13 Ա.ՃԵՄԵԱՆ, Հ., նշ. աշխ., 18-19:

փոփոխած է ուղղանկեան մէջ: Եկեղեցու ճակատներն ամբողջու-
թեամբ զարդարուած են որմնաքանդակներով, իսկ հին եկեղեցու
պատերի զարդաքանդակներն աւելի զուսպ են¹⁴:

Ս. Թադէի վանքը պարսպապատ է, որի չորս կողմերում
պաշտպանական նկատառումներով աշտարակներ են: Վանքի տա-
րածքում կառուցուեցին առաջնորդարանի շէնքը, տասնեակ վա-
նական խցեր, ուխտաւորների համար նախատեսուած սենեակներ,
ընդարձակ մառաններ, գոմեր, ձիթագործարան եւ այլ շինութիւն-
ներ:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին շրջանում
1918ի ապրիլին, ռուսական զօրքերի նահանջից յետոյ թուրքական
զօրաբանակները ներխուժեցին Ատրպատականի, մասնաւորապէս՝
Արտազի սահմանները: Յունիսի սկզբին թուրքական զօրքերը յար-
ձակուեցին վանքի վրայ:

Ողբերգական այս իրադարձութիւններից յետոյ Ս. Թադէոս
առաքեալի վանքն իր անմիջական շրջակայքով միանգամայն ա-
մայացաւ: Կողոպտել տարել էին նաեւ Ս. Թադէի Աջը¹⁵:

Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսէս արքե-
պիսկոպոս Մելիք-Թանգեանի՝ 1931 Յուլիսի 1ին «Ջերմեռանդ հա-
յերի» ուղղուած կոչով վանքի վանահայր Պետրոս վարդապետ
Ղազարեանը¹⁶ մեկնեց իրանի զանազան հայաշատ շրջաններ՝ Ս.
Թադէի վանքի նորոգութեան համար հանգանակութիւն կատա-
րելու: Կոչը գրուած էր Մելիք-Թանգեան սրբազանի ձեռագրով,
իր իսկ շարադրութեամբ եւ հաստատուած առաջնորդական կնի-
քով¹⁷:

Պետրոս վարդապետն այցելեց Թաւրիզ, Թեհրան, Նոր Զու-
ղայ, Աբադան, Մասջեդ-Սուլեյման, Սալեհաբադ եւ իր 106 էջից
բաղկացած ժապաւինեալ մատեանով հանգանակեց դրամ, եկեղե-
ցական սպասներ, հագուստ, կահաւորանք եւ վերադարձաւ վանք:
Հաւաքուած դրամով նորոգուեց վանքը¹⁸:

14 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., նշ. աշխ., 130-132:

15 Անդ, 61-62:

16 Պետրոս վարդապետ Ղազարեանը վանքի վանահայրն էր 1914 թուականից:
1924ին Ատրպատականի բեմական իշխանութեան յանձնարարութեամբ նա
վերստանձնում է իր պաշտօնը եւ հաստատում վանքում (տե՛ս ՀԱԱ, ֆ.
465, ց. 7, գ. 5, ք. 17):

17 Կոչն ամբողջութեամբ տե՛ս նոյն տեղում:

18 Անդ, ք. 18:

1948ի ամրանը Ս. Թադէի վանքի գիւղում եւ Մակու քաղաքում ապրող հայերը ներգաղթեցին Խորհրդային Հայաստան, եւ վանքի գիւղն ու Մակու քաղաքը դատարկուեցին հայերից: Նոյն թուականի աշնանը Թաւրիզում վախճանուեց Ս. Թադէի վանքի վերջին վանահայր Պետրոս վարդապետ Ղազարեանը (նա այնտեղ էր գնացել բուժուելու նպատակով): Պետրոս վարդապետի մահից յետոյ թափուր մնաց Հայաստանեայց առաքելական եկեղեցու հիմնադիր Ս. Թադէոս առաքեալի վանքի վանահայրու-թեան պաշտօնը¹⁹:

1955ին (հիշրայի 1334 թուականը) դեկտեմբերին Ատրպատականի հայոց թեմական խորհրդի առաջարկութեամբ Ս. Թադէի վանքը 405 համարի ներքոյ արձանագրուած է որպէս երկրի պատմական արժէք ներկայացնող շինութիւններից մէկը եւ ենթակայ է պետական պաշտպանութեան եւ հոգածութեան²⁰: 2000 թուականին կառավարութեան առաջարկութեամբ Ս. Թադէոս առաքեալի վանքը ներկայացուեց ԵՈՒՆԵՍԿՕին (UNESCO)՝ համաշխարհային յուշարձանների ցուցակում ներգրաւելու համար: 2008 Յուլիսի 2-10ը ԵՈՒՆԵՍԿՕի համաշխարհային ժառանգութեան կոմիտէի՝ Կանադայի Քուեբեկ քաղաքում գումարուած 32րդ նստաշրջանի ընթացքում Ս. Թադէոս առաքեալի վանքը միջազգային այդ կազմակերպութեան ցուցակում գրանցուեց որպէս Իրանի պատմամշակութային Զրդ կոթող²¹:

Ս. Թադէի վանքն իր շրջակայքով պահպանւում է ԵՈՒՆԵՍԿՕ-ի Թեհրանի յուշարձանների պահպանութեան ինստիտուտի կողմից:

Ատրպատականի հայոց առաջնորդարանը սկսած 1954 թուականից Ս. Թադէոս առաքեալի տօնի օրը (Յուլիս ամսուայ վերջին օրերից մէկն է) կազմակերպում է ուխտագնացութիւն դէպի վանք՝ համայն հայութեան ուշադրութիւնը վանքի վրայ բեւեռելու համար²²:

Իրանը բարեացակամ վերաբերմունք է դրսեւորում վանքի նկատմամբ՝ որպէս քրիստոնէական գլխաւոր սրբատեղիի, եւ հովանաւորում է ուխտագնացութիւնը:

19 Աճդ, ք. 18 շրջ.:

20 Աճդ, ք. 3 շրջ. - 4:

21 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., նշ. աշխ., 64:

22 Աճդ, 65:

Ս. Թադէոս առաքեալի վանքը մահմեդական բնակչութեան շրջանում մեծ հեղինակութիւն է ունեցել եւ ցայսօր էլ ունի:

ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Միջնադարեան Հայաստանի եւ Արտազ գաւառի կաթողիկէ հայերի մշակութային նշանաւոր կենտրոններից էր Ծործորի վանքը²³: Այն գտնուում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արտազ գաւառում (այժմ՝ Իրանի Մակու քաղաքից հիւսիս-արեւմուտք, Զանգիմար²⁴ գետի ձախ ափին):

Ծործորի վանքի մասին հնագոյն վկայութիւնը սկսւում է 1314 թուականից եւ կապւում Յովհաննէս Երզնկացի վարդապետի գրական-մանկավարժական գործունէութեան հետ: Հաստատուելով վանքում՝ վերջինս ընդունել է Ծործորեցի մականունը՝ կոչուելով Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի: Վանքը հիմնադրուել է Արտազի թեմի առաջնորդ եւ Ս. Թադէոս առաքեալի վանքի վանահայր Զաքարիա Ա. եպիսկոպոսի կողմից: Նա եւս վանքի անունով ստացել է Ծործորեցի մականունը: Կառուցման աշխատանքներն աւարտուել են 1314 թուականից մի քանի տարի առաջ²⁵: Իսկ ըստ «Ալիք» օրաթերթի հաղորդման՝ վանքը կառուցուել է ԺԳ. դարում եւ պատմական մեծ նշանակութիւն է ունեցել ԺԳ. եւ յետագայ դարերում²⁶: Վանքը հանդիսացել է գրական-թարգմանական եւ մշակութային կարեւոր կենտրոն այդ շրջանում:

Ծործորի վանական համալիրի ներկայումս միակ կանգուն շինութիւնը Սուրբ Աստուածածին եկեղեցին է: Եկեղեցին միախորան, խաչաձեւ գմբէթաւոր փոքր շինութիւն է՝ կառուցուած սրճագոյն սրբատաշ քարով, կրաշաղախով²⁷:

1985ին Իրանի էներգետիկայի նախարարութեան որոշմամբ նախատեսուած էր վանքի մերձակայ տարածքում կառուցել ջրամբար: Հայ ճարտարապետութեան այս գողտրիկ կոթողը փրկելու,

23 Նեղ ձորակ կամ լեռների մէջ անճրեւներից առաջացած հեղեղատ նշանակող Ծործոր անուամբ յայտնի վանքը տեղացի հայերը կոչել են Զենգիմար Ասպարածին (Ասպարազին), իսկ քրդերին այն ցայսօր էլ յայտնի է Մայրամ-ճանա դէյր անունով:

24 Այն յայտնի է նաեւ Դեղին գետ, Զենգիմար, Սանգիմար անուններով:

25 ԽԱԶԻԿԵԱՆ, Լ., *Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դրաքոյքը*, «Բանբեր մատենադարանի», Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրատ., 1973, թիւ 11, 144, 168:

26 «Ալիք», 6 սեպտեմբերի 1987, թիւ 190 (14460):

27 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., նշ. աշխ., 199:

աւելի բարձր տեղանքում վերաշարելու եւ վերակառուցելու նպատակով նշուած թուականից իրականացուած էին նախագիծ կազմելու աշխատանքներ²⁸:

Բարոն ջրամբարտակը կառուցելու բերումով վանքը դատապարտուած էր թաղուել ամբարտակի ջրաւազանում:

Ատրպատականի թեմական խորհուրդը մօտ երկու տարի տեւող ուսումնասիրութիւնների եւ բանակցութիւնների շնորհիւ կարողացաւ ապահովել Իրանի Իսլամական Հանրապետութեան կառավարութեան բարեյօժար համագործակցութիւնը, որպէսզի Ծործորի վանական համալիրի միակ մնացորդ եւ յուշակոթող հանդիսացող եկեղեցին շինարարական մասնագիտութեամբ փրկել կարողանայ եւ փոխադրի նոյն տեղում գտնուող աւելի բարձրադիր վայր՝ Բարոն գիւղի մերձակայ լեռնալանջին, որի ներքեւում պիտի գոյանար հսկայ ջրաւազանը:

1987 Օգոստոսի 24ին որոշում կայացուեց անմիջապէս սկսել վանքի տեղափոխման նուրբ եւ մասնագիտական գործը²⁹:

1988 Յուլիսին Թեհրանի թեմի առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկեանը կատարում է Ծործորի Ս. Աստուածածին եկեղեցու հիմնարկէքը:

Վերականգնման աշխատանքները սկսւում են 1989ին Վարուժան եւ Օժենիկ Առաքելեանների մեկենասութեամբ: Հիմնարկէքից յետոյ Ծործորը տարիների ընթացքում հիմքից վերաշարւում ու վերականգնւում է նոր վայրում՝ նոյն լեռնալանջին³⁰:

Վերականգնումը, սակայն, կատարւում է որոշ սխալներով, որոնք ակներեւ են առաջին իսկ հայեացքից³¹:

Վանքի վերականգնման աշխատանքներն ամբողջանում են 2001 թուականին:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ

Իրանի եւ ողջ հայութեան յաջորդ հոգեւոր մեծարժէք կոթողը Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն է: Այն գտնւում է Ատրպատականի հիւսիսային մասում՝ սահմանային

28 Անդ:

29 «Ալիֆ», 6 Սեպտեմբերի 1987, թիւ 190 (14460):

30 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., նշ. աշխ., 205:

31 Վերականգնման ժամանակ թոյլ տուած սխալների վերաբերեալ առաւել մանրամասն տե՛ս նոյն տեղում:

Ջուլֆա քաղաքից շուրջ 22կմ արեւմուտք՝ Արաքս գետի աջ կողմում՝ գետեզրից 2կմ հարաւ, դէպի Արաքս թեքուած հիւսիսահարաւայեաց ձորակում, Մաղարդ լեռան հիւսիսային փէշին: Այդ պատճառով այն յայտնի է նաեւ Մաղարդավանք անուամբ: Երբեմն յիշատակում է նաեւ Շամբի կամ Դարաշամբի վանք անուններով եւ առնչում վանքից 3կմ հեռու գտնուող նոյնանուն գիւղի հետ³² Մահմեդականները վանքին տուել են Դանիէլ մարգարէ (Դանիէլ փէյղամբար) անունը³³:

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի կառուցումը կապում է Քրիստոսի աշակերտ Բարդուղիմէոս առաքեալի հետ, ով, ըստ աւանդութեան, այս սրբավայրը հիմնել է քրիստոնէական կրօնի առաջին նահատակ Ստեփանոսի յիշատակին:

Հայկական պատմական յիշատակութիւններից տեղեկանում ենք, որ Մաղարդավանքը գոյութիւն է ունեցել տակաւին է. դարում: Տեղեկութիւնները վկայում են, որ վանքը վերանորոգուել է Ժ. դարում Բագրատունեաց Աշոտ Երրորդ թագաւորի (953-977) աջակցութեամբ³⁴:

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի՝ Ժ. դարի վերջից մինչեւ ԺԲ. դարի կէսերն ընդգրկող ժամանակահատուածի վերաբերեալ յիշատակութիւններ չենք գտնում:

Ուղղանկիւն յատակագիծ ունեցող Ս. Ստեփանոս Նախավկայի վանական համալիրը ընդհանուր գծերով բաղկացած է Ս. Ստեփանոս անունը կրող մայր եկեղեցուց, զանգակատնից եւ Ս. Պօղոս-Պետրոս փոքրիկ եկեղեցուց³⁵: Վանքն ունի բարձրաբերձ քարաշէն պարիսպ, բուրգեր եւ միաբանական բազմաթիւ շինութիւններ³⁶:

1589ին Մարտիրոս վարդապետը վերակառուցման աշխատանքներ է տանում վանքում, սակայն այն հիմնովին վերանորոգման է ենթարկւում Յակոբ Ջուղայեցի վարդապետի օրօք:

1653ին Յակոբ Ջուղայեցին որպէս վանահայր գալիս է Ս. Ստեփանոսի վանք ու, անցնելով գործի, հիմնովին վերաշինում սրբավայրի խարխուլած եկեղեցին:

32 Ա.Աղ., 206:

33 Ա.Աղ.:

34 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը*, Ի «Էքմիածին», ԽԲ. (1985), Յուլուար, 40:

35 Ա.Աղ., 39-40, նոյնի՝ *Արտագի երեւ վանքերը*, 256:

36 «Ալիք», 8 Հոկտեմբերի 1967, քիւ 222 (8752):

Յակոբ Զուղայեցին 1655ին կաթողիկոս դառնալուց յետոյ էջմիածնից հետեւում է վանքի վերակառուցման աշխատանքներին, որոնք աւարտւում են 1662ին՝ գրեթէ տասնամեայ տքնաջան աշխատանքից յետոյ³⁷:

Մուտքի դրան վերելի արձանագրութիւնը մեզ տեղեկութիւն է տալիս 1704ին եկեղեցու մասնակի նորոգման վերաբերեալ³⁸:

1706-1714 թուականներուն վերանորոգւում են վանականներ խցերը: 1759ին Յակոբ է Շամախեցի կաթողիկոսի կարգադրութեամբ վանահայր Միքայէլը նորոգում է երկրաշարժից վնասուած եկեղեցու տանիքը, վանքի խցերն ու պարիսպը³⁹:

1826ին նորից վերանորոգման է ենթարկւում եկեղեցին, եւ ներսի պատերի ու առաստաղի վրայ աւելանում են որմնանկարներ⁴⁰: Որմնանկարները հիմնականում զարդարում են գմբէթը եւ աւագ խորանը: Գմբէթի կենտրոնում պատկերուած է մեծ վարդեակ, որից սկսւում եւ դէպի պատուհաններն են ձգւում ութ ծաղկաշղթաներ: Թմբուկատակ քիւլը, որ զարդարուած է մասամբ պատկերուած ծաղկադօտիով եւ թռչուններով, ունի 1826ին յիշատակագրութիւն: Գմբէթատակ առագաստներին պատկերուած են վեցթեւեան հրեշտակներ (սերովբէներ) եւ բուսազարդեր⁴¹:

1827ին եկեղեցու ներսն ամբողջութեամբ գաջուել եւ սպիտակեցուել է: Գլխաւոր խորանը, գմբէթի ամբողջ ներքնամասը, կամարներն ու անկիւնները եւ որոշ այլ մասեր ունեն գունաւոր զարդանկարներ, հրեշտակների պատկերներ, գաջաքանդակներ եւ այլ զարդաձեւեր, որոնց որոշ հատուածներ աւերուել եւ փչացել են:

Եկեղեցու վերելի կամարի մէջ՝ կիսակոր քարի վրայ, որն, ըստ երեւոյթին, յետոյ է դրուել, պարսկերէն ութատող մի արձանագրութիւն կայ՝ գրուած 1831ին (հիշրայի 1247ին) Աբաս Միրզայի կողմից: Այն տեղադրուած է հայերէն արձանագրութեան

37 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, նշ. աշխ., 41:

38 «Այիֆ», 11 Հոկտեմբերի 1967, քիւ 225 (8755):

39 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, նշ. աշխ., 41:

40 Տե՛ս նոյն տեղում:

41 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., Արտագի երեմ վանքերը, նշ. աշխ., 261-262:

վերին հատուածում, որով Աբաս Միրզան իր ողորմածութիւնն է յայտնում հայերի նկատմամբ եւ կարգադրում, որ Դարաշամբ գիւղը չվաճառուի⁴²:

Բացի որմնակարներից եկեղեցու պատերը ժամանակին ծածկուած են եղել նաեւ շրջանակուած պատկերներով, որոնց հետքերը ցայսօր նշմարելի են: Որմնակարներն ու երեսպատման սուաղը խոնաւութիւնից վնասուած են հիմնականում առագաստներում, խորաններում եւ թաղերում⁴³:

Չանգակատունը գտնւում է եկեղեցու հարաւային կողմում, կառուցուած է չորս սիւների վրայ, երկյարկ է⁴⁴:

Առաջին յարկն ունի քառակուսի յատակագիծ: Յատակին գտնւում են վանքի ութ առաջնորդների տապանաքարերը: Արեւմտեան ճակատին երկու խաչքար կայ, որոնցից մէկն ունի 1696ի արձանագրութիւն, իսկ միւսի գիրն անընթեռնելի է: Հարաւարեւմտեան որմնասեան արեւմտեան նիստին զանգակատան 1854ի նորոգութիւնն իրականացնող ագուլեցի Գալուստ եւ Մկրտիչ Տէր-Մկրտչեան եղբայրների արձանագրութիւնն է: Հարաւային պատին փորագրուած է զանգակատան վերակառուցմանը վերաբերող 1879 թուակիր արձանագրութիւնը⁴⁵:

Չանգակատան երկրորդ յարկի հիւսիսային պատի վրայ քանդակուած է Աստուածածնի աւետման պատկերը⁴⁶: Երկրորդ յարկը նման է առաջինին, միայն այն տարբերութեամբ, որ առաստաղի փոխարէն առագաստներով իրականացուած է անցում դէպի զանգակատան ռոտոնդայի կլոր բացուածքը, իսկ ճակատներն էլ աւարտուում են մեղմ թեքութեամբ ճակտոններով: Խոյակները զարդարուած են երկրաչափական նախշերով: Հարաւային ճակատում կայ երկու խաչքար: Ռոտոնդայի ութ կլոր սիւների խարիսխներն ունեն քառակուսի հիմք, իսկ երկշար չթաքարէ խոյակները վեցանիստ են: Կիսակլոր կամարները նստում են խոյակներին՝ ստեղծելով զանգակատան ութանիստ թմբուկը, որն աւարտում է ութանիստ բրգաձեւ աղիւսածածկ վեղարով: Կամար-

42 «Ալիք», 11 Հոկտեմբերի 1967, թիւ 225 (8755), ԱՏՐՊԱՏԱԿԱՆ, Ա. արք., Ճամապարհորդութիւն ի Դաւրէժ, ի «Կոռնկ հայոց աշխարհին», Բ. (1861), թիւ Ը., Օգոստոս, 635:

43 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., Արտագի երեք վանքերը, նշ. աշխ., 262:

44 «Ալիք», 11 Հոկտեմբերի 1967, թիւ 225 (8755):

45 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., Արտագի երեք վանքերը, նշ. աշխ., 276:

46 «Ալիք», 11 Հոկտեմբերի 1967, թիւ 225 (8755):

ները միացած են զանգակատան կայունութիւնն ապահովող երկաթէ ձողերով⁴⁷:

Վանական համալիրի յաջորդ՝ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու կառուցումն իրականացուել է հետեւեալ կերպ: Ս. Ստեփանոս եկեղեցու եւ հիւսիսային պարսպի միջեւ յետագայում սրբատաշ քարով կառուցուել է նեղ ու երկար սիւնասարահ, որին էլ արեւմուտքից եւ արեւելքից յաւելելով կոպտատաշ շարուածքով պատեր՝ վերածել են միանալ եկեղեցու եւ կոչել Ս. Պօղոս-Պետրոս⁴⁸:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1918ին, թուրքական բանակները ներխուժում են իրանի Ատրպատական նահանգ եւ աւերում են իրենց ճանապարհին գտնուող հայաբնակ աւաններն ու բնակավայրերը: Այս աւերներից զերծ չեն մնում նաեւ Արաքսի ափին գտնուող Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն ու նրան կից վանքապատկան հայկական Դարաշամբ գիւղը⁴⁹: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, յատկապէս հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (1917-1921) թալանւում է վանքը, եւ այրւում են գրադարանում եղած գրքերը⁵⁰:

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը ենթակայ է Թաւրիզի հայոց թեմական խորհրդին⁵¹:

Վանքի վերականգնման աշխատանքները սկսուեցին 1973 թուականից եւ ընդհատումներով շարունակուեցին մօտ երեսուն տարի⁵²:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Իր ճարտարապետական ինքնատիպութեամբ է առանձնանում Նոր Զուղան: Այն իր նկարագարողուած եկեղեցիներով միակն է ոչ միայն Սփիւռքում, այլեւ մայր հայրենիքում՝ ներսից կիսազնդածեւ, իսկ դրսից ձուլածեւ կրկնակի գմբէթներով: Մահմեդական ճարտարապետութեանը բնորոշ այս լուծումը հայկական շինարուեստում հանդիպում է միայն Նոր Զուղայում, ինչը վկայում է Նոր Զուղայում հայկական եւ իրանական (իսլամական)

47 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Արտագի երեք վանքերը*, Եջ. աշխ., 276:

48 Ա.Ա., 268:

49 ՀԱԱ, ֆ. 465, ց. 7, գ. 3, ք. 2:

50 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Ատրպատականի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը*, Եջ. աշխ., 41:

51 «Արիֆ», 12 Հոկտեմբերի 1967, քիւ 226 (8756):

52 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Արտագի երեք վանքերը*, Եջ. աշխ., 284:

մշակույթների սերտ փոխներգործութեան մասին: Հայկական եւ իրանական ճարտարապետութիւնների այսպիսի իւրատեսակ համադրման շնորհիւ Նոր Զուղայի եկեղեցիները եզակի են ճարտարապետութեան պատմութեան մէջ: Նմանօրինակ լուծումները Նոր Զուղայում յաջողուած են, ինչը հարստացնում է հայոց ազգային մշակույթը՝ դրական լիցք հաղորդելով հայ-իրանական դարաւոր բարեկամութեանը:

Զուղայի ինչպէս հին, այնպէս էլ նոր պատմաբաններն այնտեղ կառուցուած եկեղեցիների թիւը համարել են 24ը, որոնք նոյն թաղում երբեմն կառուցուել են իրար կից: Եկեղեցիներն ունեն հայ միջնադարեան ճարտարապետութեան աւանդական՝ գմբէթաւոր դահլիճի եւ քառամույթ գմբէթաւոր բազիլիկի յօրինուածքներ, սակայն արտաքին ծաւալների լուծման եւ ճակատների յարդարանքում զգալի է իրանական արուեստի ազդեցութիւնը:

Ներկայումս Նոր Զուղան Սպահանի թաղամասերից մէկն է: Նոր Զուղայում պահպանուել են հայ ճարտարապետների եւ վարպետների կառուցած աղիւսաչէն բնակելի շէնքերը, Ս. Ամենափրկիչ կիչ վանքը եւ երբեմնի 24 եկեղեցիներից 12ը:

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքը Ժէ. դարի ճարտարապետական յուշարձան է: Նոր բնակավայրում հաստատուելով՝ հէնց առաջին տարում Մեծ Մեյդան թաղամասում հայերը կառուցեցին իրենց առաջին՝ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի անունով փոքրիկ եկեղեցին, որով եւ հիմք դրեցին Ս. Ամենափրկիչ վանքին, որն այդպէս կոչուեց Հին Զուղայում գոյութիւն ունեցող վանքի անունով:

Ս. Յակոբ Մծբնայ եկեղեցին կառուցուել է 1606-1607: Իր փոքրութեան պատճառով այս եկեղեցին երբեմն անուանել են մատուռ, բայց իրականում այն օրինաւոր եկեղեցի է՝ կանոնաւոր կառույցով, բեմով, դասով⁵³:

1655ին Սպահանի հայերը, բնակութիւն հաստատելով Զուղայի արեւմտեան կողմում, քանդեցին առաջին օրերին կառուցուած փոքր ու արդէն խարխլուած եկեղեցին, եւ Ժողովրդի հանգանակութեամբ ու իրանահնդկաստանի թեմական առաջնորդ Դաւիթ Ա. Զուղայեցու նախաձեռնութեամբ նոյն տեղում 9 տարուայ ընթացքում կառուցուեց ներկայիս փառաւոր Ս. Յովսէփ

53 Ա.Ա.ԳԵԱՆ, Լ., Նոր Զուղայի հայկական եկեղեցիները, ի «Էջմիածին» ԾՁ. (2000), նոյեմբեր, 97:

Արեմաթացի եկեղեցին, որն Ամենափրկիչ վանքի հիմնական կառույցն էր:

Վանքի Ս. Յովսէփ եկեղեցին դրսից բաւական համեստ տեսք ունի. երկյարկ շինութիւն է, իրանական մզկիթների նման ունի գեղազարդային կամարներ շէնքի երկու յարկերում, ներքին կիսազնդաձեւ եւ արտաքին ձուլաձեւ գմբէթով⁵⁴: Եթէ չլինէին 1702ին կառուցուած զանգակատան տանիքի՝ խաչով զարդարուած սրածայր գագաթը եւ շինութեան արտաքին պատերի՝ մզկիթներին յատուկ երկնազոյն յախճասալէ ծածկոյթի բացակայութիւնը, բաւական դժուար կը լինէր այն մզկիթից տարբերել:

Սակայն ներսից այն բոլորովին նման չէ մզկիթի: Ունի բարձրակամար երկու դահլիճ: Դահլիճների ներքին պատերն ու առաստաղը զարդարուած են կրօնական թեմաներով գունաւոր իւղաներկ նկարներով եւ ոսկեզօծ ծաղկանկարներով: Այդ ծախսը հոգացել է խօջա Աւետիքը՝ գլխաւորութեամբ հանճարեղ որմնանկարիչներ Մինասի, Յովհաննէս Մրքուզի, Տէր Կիրակոսի, Բարսեղի եւ այլոց⁵⁵: Շինութեան ներքին յարդարանքն առանձնապէս տպաւորիչ դարձնող որմնանկարներում գերիշխում է մուգ կարմրագոյն երանգը, որ յատուկ է հայկական եկեղեցական որմնանկարներին եւ միջնադարեան մանրանկարչութեանը: Որմնանկարներում ժամանակի հոլանդական ու իտալական գեղանկարչական դպրոցների ազդեցութիւնը կայ⁵⁶:

Վանքի առաջնորդարանի հին շէնքը քանդուել է 1860ին, որի տեղում կառուցուել է նոր երկյարկ շէնք, իսկ 1915ին կառուցուել է առաջնորդարանի մէկ այլ շէնք: Հին առաջնորդարանը 1930ական թուականներից մինչեւ 1970ական թուականները ծառայել է որպէս գրադարան, իսկ յետոյ որոշ նորոգութիւններով դարձել առաջնորդարանի գրասենեակ-ընդունարան⁵⁷: 1905-1906 թուականներին վանքի բակում կառուցուել է մէկ այլ շէնք⁵⁸, որի ճակատին յախճապակու վրայ մեծ տառերով գրուած է «Մատենադարան Ս. Ամենափրկչեան վանքի»: Եռադահլիճ, մի քանի սենեակ-

54 Ենթադրում է, որ շինարարները գմբէթն այդպէս են կառուցել տեղի մահմեդականների դժգոհութիւնը չյարուցելու համար:

55 Ա.Ի.Ա.Գ.ԵԱՆ, Լ., նշ. աշխ., 94:

56 Գ.ԷՈՐԳ.ԵԱՆ, Կ., նշ. աշխ., 469, ի «Պարսկահայ տարեցոյց», Բ. (1929), 17:

57 Ա.Ի.Ա.Գ.ԵԱՆ, Լ., նշ. աշխ., 94:

58 Այն կառուցուել է Թադէոս Տէր-Յովհաննէանի բարերարութեամբ՝ ի յիշատակ իր հօր՝ Նոր Զուղայի պատմագիր Յարութիւն Տէր-Յովհաննէանի:

ներ ունեցող մատենադարանի այս նոր շէնքը մինչեւ 1930ական թուականները ծառայում էր որպէս գրադարան-մատենադարան⁵⁹։ Մատենադարանի հաւաքածոն կազմուել է դեռեւս Ժ. Դարի առաջին կէսին վանքի եւ եկեղեցիների սեփականութիւնը կազմող ձեռագրերից։ Յետագայում հարստացել է նուիրատուութիւններով եւ գնումներով⁶⁰։ Մատենադարանում պահպանուել են շուրջ 10000 հնատիպ ու նոր գրքեր, որոնցից 6000ը՝ հայերէն, ինչպէս նաեւ 683 ձեռագրեր, որոնցից 34ը՝ մագաղաթի վրայ⁶¹։ Ամենահինը Ժ. Դարի մագաղաթեայ Աւետարանն է։ Ձեռագրերի մեծ մասն ունի ընտիր մանրանկարչական նկարազարդումներ⁶²։ 1971ին փոխադրուելով նորակառոյց շէնք՝ մատենադարանը դարձել է առանձին միաւոր⁶³։

Վանքի շրջակայքում կայ չորս կիսանդրի։ Դրանցից առաջինը Մեսրոպ Մաշտոցինն է, երկրորդը՝ Խաչատուր Կեսարացունը, իսկ գրադարանի շէնքին մօտիկ բանաստեղծներ Պարոյր Սեւակի եւ Յովհաննէս Շիրազի կիսանդրիներն են։ 1930ին մատենադարանի մօտ կառուցուել է տպարանի նոր շէնք, իսկ 1975ին՝ յուշարձան՝ ի յիշատակ 1915ի Մեծ եղեռնի նահատակներ⁶⁴։

Հին յիշատակարաններում Ս. Ամենափրկիչ վանքին տրուել են «սարսափելի», «փառաբնակ», «վսեմական», «գերաիրաշ» եւ նմանօրինակ բնութագրումներ⁶⁵։ Բարձր պարիսպներով շրջապատուած վանքը դրսի հետ հաղորդակցուել է կամարակապ միակ մուտքով։

Իրանահնդկաստանի թեմական կենտրոն Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքը թեմակալ առաջնորդի աթոռանիստն էր։ Այժմ էլ թեմի⁶⁶ առաջնորդանիստ հանդիսացող Ս. Ամենափրկիչ վանքը ոչ միայն Նոր Զուղայի եւ իրանահայութեան, այլեւ ողջ հայութեան պարծանք հանդիսացող կառոյց է։

59 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., Իրանահայ գաղութի պատմութիւնից (նորագոյն շրջան), 278։

60 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Լ., նշ. աշխ., 101։

61 ԴԱՆԼԷԱՔԵԱՆ, Կ., Հայ Սփիւռքի պատմութիւն (համառօտ ակնարկ), Երեւան, «Զանգակ-97», 2004, 202։

62 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Լ., նշ. աշխ., 101։

63 Անդ, 94։

64 Անդ։

65 «Պարսկահայ տարեցոյց», 1929, 16։

66 Իրանահնդկաստանի թեմը 1960 թուականից կոչուել է Սպահանի եւ Հաւալային Իրանի թեմ, իսկ 1995 թուականից՝ Սպահանի թեմ։

Նոր Զուղայի մեծ եւ հնագոյն եկեղեցիներից Ս. Գէորգը (նախկինում՝ Խոջենց ժամ) կառուցուել է 1611ին խօջա Նազարի կողմից, որին կոչել են Մեծ Խօջա: Փոքր Մեյդան թաղամասում գտնուող այս եկեղեցին Նոր Զուղայի յայտնի ուխտատեղիներից է: Նոր եկեղեցի կառուցելու համար Ժէ. դարի սկզբներին Շահ Աբասի հրամանով Ս. էջմիածնից Նոր Զուղա բերուած 15 կտոր քարերը, եօթ տարի մնալով Սպահանի մօտ գտնուող Բաթուն գիւղում, յետագայում տարւում են Ս. Գէորգ եկեղեցի, ուր պահուում են ցայսօր: Այդ պատճառով որոշ գրչագիր մատեաններում այս եկեղեցին կոչուել է նաեւ Ս. էջմիածին⁶⁷:

Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցուել է 1614 թ. Յակոբջան թաղամասում ժողովրդի նուիրատուութիւններով: Այն Նոր Զուղայի եկեղեցիներից ամենամեծն էր իր չափերով եւ արտաքին պատերին ամենաշատ խաչքարեր ունեցողը:

Յովհաննէս Մկրտչի անունը կրող եկեղեցին կամ Աջի ժամը⁶⁸ գտնուում է Զարսու թաղամասում: Անցեալում կոչուել է Ս. Աստուածածին: Կառուցուել է 1621ին ժողովրդի նուիրատուութիւններով, քառանկիւն է՝ խարսխուած 4 սիւների վրայ:

Նոր Զուղայում կառուցուած եկեղեցիների մէջ ճարտարապետական եզակի արժէք է ներկայացնում Ս. Բեթղէհէմ եկեղեցին՝ կառուցուած հայկական եւ իրանական ճարտարապետութիւնների իւրայատուկ համադրումով: Այն կառուցուել է 1627-1628ին Նոր Զուղայի կենտրոնական թաղամաս Մեծ Մեյդանում: Եկեղեցու կառուցման ծախսերը հոգացել է խօջա Պետրոս Վելիջանեանը⁶⁹: Կամարների վրայ յենուած ձուածեւ գմբէթը խոշոր չափերի շնորհիւ դարձել է ողջ շինութեան գերիշխող տարրը: Եկեղեցին չունի սիւներ: Այն ամբողջութեամբ զարդարուած է որմնանկարներով: Իւզաներկով կատարուած նկարազարդումներն իրենց նրբութեամբ գերազանցում են Ս. Յովսէփ եկեղեցու որմնանկարները⁷⁰:

Ս. Սարգիս (Ամենափրկիչ) եկեղեցին կառուցուել է 1659ին ժողովրդի նուիրատուութիւններով: Վերակառուցուել է 1881ին: Ունեցել է նկարազարդումներ, բայց ներկայումս այն գրեթէ ամբողջութեամբ սպիտակեցուած է:

67 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Լ., նշ. աշխ., 96-97:

68 Ժողովրդի կողմից Աջի ժամ անունն է ստացել, քանզի համարուել է առաջին Աջն ունեցող եկեղեցին:

69 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Լ., նշ. աշխ., 97:

70 ԳԵՈՐԳԵԱՆ, Կ., նշ. աշխ., 470:

1659ին է կառուցուել նաեւ Ս. Մինաս եկեղեցին, որ գտնուում է Դաւրէժ թաղամասում (նախկինում՝ Ս. Աստուածածին): Կառուցուել է ժողովրդի հանգանակութեամբ: Այն կամարակապ է, որմնախորշերի եւ սիւնազարդերի գունաւոր զարդանկարներն աչք են շոյում: Եկեղեցու խորանն ամբողջովին նկարազարդ է: Վերանորոգուել է 1909ին հանգուցեալ Յովսէփ Պօղոս խանեանի կտակած գումարներով⁷¹:

Նոր Զուղայի եկեղեցիներից մի քանիսը որմնանկարներից բացի զարդարուած են նաեւ գունաւոր եւ նկարազարդ յախճապակիներով, որոնցից ամենահինը պատրաստուել է 1651-1666ին Ս. Աստուածածին եկեղեցու համար:

Շիրազի հայկական եկեղեցին կառուցուել է 1662ին: Արտաքուստ այն անշուք է եւ ծեփապատ: Սակայն բարձր պարիսպներով շրջապատուած եկեղեցու առաստաղի որմնանկարներն ունեն գեղարուեստական մեծ արժէք: Գորգանախշերը նման են իրական գորգի: Ըստ ժամանակակիցների վկայութեան՝ այդ նախշերը ժամանակին եկեղեցու յատակը ծածկող գորգերի ընդօրինակումն են:

Ազգային մշակոյթի հարուստ աւանդոյթների վրայ խարըսխուած հայկական ճարտարապետութիւնը, որին բնորոշ են գեղարուեստական հարուստ աւանդոյթները եւ ազգային ինքնատիպութիւնը, իրանում ունեցաւ որակական նոր դրսեւորումներ: Իրանահայ ճարտարապետութիւնը, լինելով արուեստի տարբեր ոճերի համադրութիւն, նոր երանգ է հաղորդում հայ կառուցողական արուեստին:

Նոր Զուղայի՝ հայկական եւ իրանական ճարտարապետութիւնների իւրօրինակ միահիւսմամբ ստեղծուած բարձրարժէք կոթողները վկայութիւնն են երկու ժողովուրդների բարեկամութեան եւ խաղաղ գոյակցութեան:

ԱՍՏԳԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ

71 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ, Լ., 62. աշխ., 98:

Summary

ABOUT A VARIOUS MONUMENTS OF
IRANIAN – ARMENIAN ARCHITECTURE

ASTGHIK HAKOBYAN

A number of buildings (primarily church buildings) have been preserved in Iran, which, being the Armenian architectural monuments are the silent witnesses to the centuries – old existence of the Armenian settlements in that country. The Iranian – Armenian architecture is a combination of different styles of art, which gives a new dimension to the Armenian constructive art. The Iranian – Armenian culture became the guarantee of preserving the Armenian national image outside the homeland. The unique culture created by the Armenian community of Iran, which is the bearer of the best cultural traditions of the Armenian people, complements the treasury of the centuries – old Armenian culture. The Iranian – Armenians have influenced and continue to influence the Iranian culture for centuries. This reality is an expression of the centuries – old Armenian – Iranian cultural ties. The study and examination of the branches of the Iranian-Armenian art, the coverage of the high-value cultural heritage created by the Iranian-Armenians in those fields have found their expression in this article.